ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 703- Ա

«ԱՐՄԱՎԻՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍՈՑԻԱԼ- ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 5 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը՝

1. Բարեգործական որակել «Արմավիրի զարգացման կենտրոն» սոցիալ-տնտեսական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ 58,098,020 դրամ ընդհանուր արժողությամբ «Արմավիր քաղաքի թիվ 5 մանկապարտեզի վերանորոգում» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ «Արմավիրի զարգացման կենտրոն» սոցիալ-տնտեսական հասարակական կազմակերպության կողմից (ՀՎՀՀ՝ 04417204) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Միսակ Մարգարյան Արմենակի» անհատ ձեռներեցի հետ (ՀՎՀՀ՝ 63319343) 2023 թվականի փետրվարի 10-ին կնքված՝ N 001/23-[01-23-GC Embassy of Japan] պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական

աշխատանքների իրականացում՝ 57,618,020 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Էյվիսի քոնսալթինգ ընդ առդիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 00433357) 2023 թվականի փետրվարի 23-ին կնքված՝ N 11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է առդիտորական ծառայությունների մատուցում՝ 480,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Արմավիրի զարգացման կենտրոն» սոցիալ-տնտեսական հասարակական կազմակերպությանը՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից կատարված աշխատանքների, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

11.10.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ